

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՄԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ՔՂՅԱԿՑՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԻ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ  
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ ԼԵԱՂԻ  
ԳԱՀԻՐԷ  
Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL  
**NOR-OR**  
CAIRE, B. P. N° 117

# ՆՈՐ ՕՐ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՍԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս  
Դանիւրի համար Տարեկան, 50  
" " Վեցամսեայ 30  
Շրջակայից " Տարեկան, 60  
" " Վեցամսեայ 35

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՇԱՄԱՐ

Տարեկան . . . . . Ֆրանկ 18  
Վեցամսեայ . . . . . " 10

ՌՈՒՍՒՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՄԱՐ

Տարեկան . . . . . Բուբլի 7  
Վեցամսեայ . . . . . " 4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐԸ ԿԱՆՆԻԿ Է

ԵՒ ՔՂՅԱԿՑԱՐԻ ԾԱՌՔԸ

Թերից Վարչութեանը վրայ է:

## ՊԱՏՏՈՒԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՕՐԻ Վարչութիւնն իր երեկուան նիստին մէջ, որ տեղի ունեցաւ կէս օրէ ետքը ժամը 4 1/2ին, ընդունեց նախկին նախագահ Ազն. Տիար Սմբատ փափազեանի հրատարակած ու անմիջապէս վերակազմեց նոր Գիւնը Վարչութեան, որ կը բաղկանայ հետեւեալ անձնակազմով:

ՆԱԽԱԳԱՀ. Վսեմ. Եւսուսի Պեյ Ազիզ. անդամ Միջազգային դատարանին Գահիրէի:

ԲԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑԻՑ. Տիար Սրմբատ փափազեան, փաստաբան Միջազգային դատարանին Գահիրէի:

ԱՐՏՅՆԱՏԷՐ "ՆՈՐ-ՕՐ", Մ. Ժիւլ Միւնիէ հրատարակագիր, Տէր և Տնօրէն "Գուռիցե սիւնի" օրաթերթին:

ԽՆԴՐԱԳՐԱՊԵՏ "ՆՈՐ-ՕՐ", Տիար Սմբատ Բիւրատ, Ուսուցիչ, Հիմնադիր - Տնօրէն կեդր. կրթարանին Գահիրէի և Ասենապետ Գործ. Ժողովայ Լարան - Ընթերցաստան ընկերութեան:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆՔ. Տիար Գառնիկ Չպուգեան, Հաշուակալ Ռամիէի երկաթուղեաց վարչութեան, և Տիար Կ. Չուրաբեան, անդամ Գործ. Ժողովարան-Ընթերցաստան ընկերութեան որ միևնույն ժամանակ կ'ստանան թերթի մատակարարութիւնը:

Երեկուան նստին մէջ արուեստան կարևոր որոշումներ "Նոր Օր" յարատեւութիւնն ապահովող միջոցներու վրայ, ինչպէս նաև թերթին պարունակութիւնն աւելի ճոխացնելու մասին ինչ ինչ կարգադրութիւններ եղան:

Գահիրէ 18 Յուլիս 1900

## ԳԱՀԻՐԷԻ ԳԱՍՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԸ

ԵՒ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գահիրէի Ազգ. Վարժարանի ամսվերջի հարցաքննութիւններն աւարտած են ու պարագրքն սկսաւ այն վարժարանին, որուն վրայ ճշգրիտ և բաւարար տեղեկութիւններ տալու համար պէտք է նախ անցողակի անստեղծ մը ընել անոր անցեալին վրայ, որպէսզի կարելի ըլլայ ներկան դատել ու ապագային ուղղութիւնը գծել:

Երեք տարիներ անցած են այն թուականէն ի վեր որ Գահիրէի Ազգ. Վարժարանը, Խորհրդանշանով ծանօթ, սկսած է կոչուիլ Գաղսեան, բնականաբար կտակարար Բարերարին անմահ անուան յարգանք մ'ընծայելու:

Նպատակով: Յորջորջումի փոփոխումը պատիւ կը բերէ ըսենք անոր հեղինակներուն, որոնք ազով փափագած են անզուգական Բարերարին յիշատակը վառ պահելու ազգային մանկութիւն ու բովանդակ եզրապահայոց մէջ:

Սակայն, ինչո՞ր է գիտնալ թէ՛ անուանական յարգանք մը կը բաւէ, մինչդեռ Բարերարին կտակը՝ մեկին է, բացորոշակի կը տրամադրէ աղքատիկ հայ մանակներուն զուտ ազգային դաստիարակութիւն ու այս վեհ նպատակին իրագործումին յատկացուցած է ընդարձակ հասութարեր կայուններ, հազարաւոր արմատներէն ըրով ու բարերար հողերով: Վասպուրականի հատար զաւակը, որ իր այդ կտակով միայն՝ կըրնայ համարուիլ Հայութեան փառքին շողջողուն աստղերէն մին, տխուր նախազգացումով մը գողցես գուշակելով թէ՛ Եզրապահայոց մէջ տունային անտարբերութիւնն օրէ օր պիտի ծաւալ սասանար, չէտամ է կտակին մէջ զուտ ազգային դաստիարակութեան պէտքը, զոր, դժբաղդարար, չ'են զգացած ու սակաւին են զգար մեծանուն Հայուն յաջորդող սերունդները . . . :

Վարժարանին անունը փոխելով կարելի է միթէ մեղմել խղճի խայթը, զոր ամեն զգայուն Հայ կը կրէ, քանի՛ կը տեսնէ ազգ. վարժարանին օղորմիկ կացութիւնը: Մարդ երբեմն կը փորձուի կարծելու թէ՛ այդ վարժարանին շուրջը պտրտող զրոյցները, ցցուած դիտողութիւնները բոլորովին ճիշտ ու արդարացի չ'ըլլան, ու թերևս դժբաղդ վարժարանը, անգամ մը վարկաբեկ եղած, ա՛լ դատապարտուած զոհն եղած ըլլայ հանրութեան անիրաւ պարտաւանքին: Երանի՛ թէ այդպէս ըլլար, այն ատեն ո՞րքան դիւրին պիտի ըլլար վերականգնել խախտուած հաւատքը, բաւական է որ ժողովուրդը հոն տեսնէր զգալի բարեփոխումներ ու յառաջիմութեան նշաններ: Մէ՛կ յաջող հարցաքննութիւն միայն պիտի բաւէր յեղաշրջելու, դէպի լաւ դարձնելու հանրային կարծիքը, սակայն ե՞րբ պիտի տեսնենք արդեօք այդ ցանկալի ու մաղթելի յաջողութիւնը: Այո՛, այս վերջին քանի մը տարիներուն մէջ, կէս երկվեցեակ մը հարցաքննութիւններ տեսանք, որոնք սակայն վարժարանի վարկը փրկելու և ժողովրդին աւելնկալիքը պատկելու բնութիւնը չ'ունեցան. ու եթէ հարկ ըլլայ ճշմարտութիւնը յայտարարել, պիտի պարտաւորինք վերաւորել այնպիսի թանկագին անձնակազմութիւններ, որոնց անվիճելի արժանիքը գնահատելով հանդերձ՝ իրենց պաշտօնավարութեանը մէջ ցոյց տուած թերութիւնները քննադատելէ չ'պիտի կրնանք հրատարիլ, թերութիւններ, որոնք ծանրակշիռ հետեւանքներ տուած են մեր մատաղ սերնդին դաստիարակութեանը տեսակէտով. պատասխանատուութիւնները մէկէ աւելի մարմիններու վրայ կը ծանրանան: Եթէ ստոյգ է որ անցեալը՝ ներկայից, պէտք է ուրեմն, արդար ըլլալու համար, քննադատութիւնն սկսիլ անցեալէն, ու այս վերջին ներկայով. ու այս երկու քննադատութիւններէն պիտի ծագի լոյսը, պիտի լուսաւորուի մութ ապագան:

Ազգ. Վարժարանին անցեալը, բազմաամար ներկային, կ'ըսուի թէ՛ աւելի փայլուն շրջաններ ունեցած է, գոնէ այն ժամանակին ըմբռնուած տոհմային դաստիարակութիւնը տրուելով աշակերտներուն, փոխանակ օտար լեզուներու մոռանալի չոր ու ցամաք բառագիտութեամբը խճողելու ըզնչները:

Իզմիրլեան Սրբազանի առաջնորդութեան օրով՝ ազգ. վարժարանը սկսած էր քայլ առ քայլ մտնել յառաջիմութեան շահիցը, ուսանող երկսեռ մանկերամը կը դիմէր հոն յօժարափոյթ և զուարթամիտ:

Այդ շրջանը քանի մը տարիներու կարճատե կեանքն ունեցած է դժբաղդաբար, որովհետև վարժարանին մէջ ուրք դրած են այնուհետև այնպիսի անփորձ ու տաք լուր պաշտօնեաներ, որոնք ուսուցչութեան տարրական պարտականութիւններն իսկ մոռնալով՝ ընդունաւ կութիւն ցոյց տուած են աւելի հանրային զրկուանքն ու ստեղծութիւնը գրգռելու վարժարանին դէմ, քան թէ ազգային մանկութիւնը կրթելու համար իրենց վստահուած պաշտօնները վարելու:

Եւ որովհետև մեր տոհմային թերութիւններէն մին է իւրմտանքը, որ շատ անգամ ներշնչուած կ'ըլլայ վնասակար թերաբանքներէ կարգ մը շահամոլներու, որոնք իրենց կրքին ու շահագիտութեան գործիք ընել կը յաջողին շատ մը միամիտներ, շահագործել ասոնց դիւրահաւանութիւնը, Ազգ. Վարժարանն ալ այդ յամառ ու հսապատշտ տգէտներուն բերանը կը դառնայ բամբասանքի առարկայ մը: Եւ այդ թուականէն կ'սկսի բոլորել իր անկումի շրջանը, մինչև որ նորէն կը յանձնուի կրթութեան զեկը կարող ձեռքերու, և հազիւ թէ շունչ առնել կ'սկսի խեղճ վարժարանը, անհարկի ու անտեղի փոփոխութեամբ մը, կրթական խորհրդական կը կարգուի բանիմաց վարչագէտ երիտասարդ մը, որուն սակայն չհամապատասխան գործը՝ իր հանամ պերճախօսի համբաւին, և որուն փորձառութիւններէն օգտուելու պէտք չունէր ժամանակին Տնօրէնը, որ արդէն հայ ազգի ուսուցչահօրը մեծանուն:

վարպետին քով ստացած էր իւր ուսուցչական փորձառութիւնները : Կը ցատին որ Պալատեան վարժարանին այդ պիտուր չըջանին պատմականին մէջ կը պարտաւորինք սլապէս անխնայ գտնուելու անձնական բարեկամներու նկատմամբ : Սակայն, երբ ազգային կամ հանրային սուրբ շահերը կը խօսին, պէտք է որ լռեն անհատական մտերմական զձեռն նկատումները : շուրջը կը գտնուինք կրթական հարցի մը, որ հարցերուն վեհամագոյնն է, կենսական հարցն է, ազգային վերակազմութեան հետ սերտիւ կապուած : Վարժարանի ուսմանը յայտագրին ու ներքին կանոնադրերը ահա՛ երկու անհրաժեշտ բաներ, զորս պիտի փնտռէ որեւէ այցելու մը և որոնք հիմէ գտնուին մեր վարժարաններուն մէջ, չքննող գլուտ մը պիտի նկատուին : Երկուսով փոքրաթիւ են կրթական հաստատութիւններն, որ ունեցած լլան իրենց կանոնադրին ու յայտագրերը : Այս անկերպարան գրութեան մէջ, ատեն մը ՚իչ շարունակէ երբեմնի խորհնեան վարժարանը, որ ինչպէս ըսինք, այսօրուան Գալատեան վարժարանն է : քիչ յետոյ, նեղոսի պարբերական յորդումին հետ, վարժարաններու հեղեղ մը կը յորդէ Պէյն-էլ-Սուրէյն ներս գաղթային հասանքէն և զիպտական եզրքը նետուած անպարէն ու թեւազուրկ թուշուներ :

Այս ուսուցիչներէն կային որ իրենց քանի մ'ամսաթիւները թափական խորհրդին կողորդը ձգած փախած էին հայրժամքէն ու, ինքզինքնին եկած նետած էին հոս, վաղուան հոգը յանձնելով երկնային վարդապետին : Կային որ, չքեղ ու ոսկեւոծ թուղթերու վրայ տպուած վկայագիրներ բերած էին և ո՛ւր որ գիմէին հետեւին կը ամենէին :

(Շարունակելի)

**ՈՐՈՐԱՆ, ԵԿԵՂԵՑԻ, ԲՆՈՒԹԻՒՆ, ՎԱՐՃԱՐԱՆ, ԼՍԱՐԱՆ**  
**ՈՐՈՐԱՆ**

Մարդը կուգայ լոյս աշխարհ, անզօր, թոյլ, խեղճ երախայ մ'է ան, առաջին ձայնը՝ ճիչ մ'է, որուն մէջ գողցես կ'արտայայտուի կեանքին, իրական տառապանքին նախազգացումը : մերկ է նորածինը, պատապարել պէտք է անի, տկար է, մօրը կաթովը պիտի զօրանայ : խեղճ է, պէտք է մայրենի թեւին տակը պաշտպանուի : Ուստի որորանը կը զրուի, թեւիկները կը կապուին և ինքը, իր պաղատագին նայուածները կը սեւեռէ մօրը, կարծես մայրական զորովով իր նայուածներուն մէջ բան մը կ'ուզէ կարգալ, ուսմանի, ու կ'սկսի լալ ջերմագին, մայրիկը կ'երեբցնէ օրօրօքը, երախան միշտ

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

**ՁԿՆՈՐԱԸ**

Ը.

Օգը զարձեղ ամպերով սքողուած էր : Գառնիկ շտապաւ կը քայլէր պատերուն քառակուսի, և ինքն իրեն խնայով՝ հետեւանք իր մէջ զգացած մեծ գոհունակութեան մը, երբ ոտքը արգելքի մը բազմեցաւ : Մի և նոյն ժամանակ տկար ձայն մը զարկաւ ականջին :

Ձկնորը այդ ընդհարուժէն հաւասարակշռութիւնը կորսնցնելով ծնկացը վրայ ինկաւ, և ձեռքը երկնայնիւով պզտիկ դուռնի մը շօշափեց :

Յոտից ցզուրկն ցնցուեցաւ, և մանուկ մը գրկած ելաւ կանգնեցաւ :

- Ներսէ՛ս, ըստ պիտուր ծոած :
- Բայց պատասխան չ'ուստա :
- Ներսէ՛ս, ներսէ՛ս, տպա՛ւ : կրկնեց Գառնիկ արտասուական ձայնով և մանկան այսերը համար ըրելով :
- Մեզա՛յ, հայրիկ, մեզայ, ամենակտորուկ ձայն մը լսեց :

Հէք փոքրիկը՝ միջամտութեամբ միւս գինովներու՝ հօրը գազանային և յիմարական բարկութենէ մազա-

կուլայ : նա ևս ունի հոգեկան ցրտանք մը, մօրէն բան մը կը պահանջէ, մայրը կը հասկնայ երախային պահանջը, կ'սկսի փափկաձայն երգել : և նոյն քնակ աչիւն առիւր : Օրօրօքին երեքու մը, ու երկու ներքաշնակութիւնը կը թրթռայեն մառախալ հոգեկան թեւերը :

**ԵԿԵՂԵՑԻ**

Մանկիկը կ'աճի ու կը զարգանայ, զորս կ'ելնէ օրօրօքէն, ուր բանտարկուած էր, հօրը հետ կ'երթայ եկեղեցին : Սրբաւարին որմերէն կախուած պատկերները, կանթիղներուն պղպտաքը, շարականներուն ու միջոցներուն ու տաղերուն ստեղծներուն կրկնային համերգութիւնը, այս ամենը կը ապաւորուի ին կոյս ու անորի՛ք հոգեկան մէջ, ու մանուկը կ'սկսի սիրել եկեղեցին, առաւօտ և երեկոյ կը սիրէ երթալ հոն, ու քիչ յետոյ կը ցանկայ մասնակցել ժամերգութիւններուն :

**ԲՆՈՒԹԻՒՆ**

Մանկութեան ոսկի տարիները կը սանձին, կը սրանան արագ արագ, ու մանուկը կը նետուի բնութեան ծոցը : գետակներու եղիքը, ժայռերու պապաթը, ձորակները գողը, ձառնուր ոտքը, լայնարձակ գաշտերու երկայնքը, ստուերախիտ անտառներու խորքը, արծաթի ցրտաքոր արեւներու զլուրը կ'առանձնանայ, ժամուրսով կը թաղուի միայնութեան մէջ, կը սիրէ երազել, երեւակայել, յուսալ : կը լսէ բնութեան հրեշտակային երաժշտութիւնը, կը բազմատէ զայն մայրենի օրօրին ու եկեղեցիի մեղեգներուն հետ, ու կ'ըմպի, կ'ապշի :

**ՎԱՐՃԱՐԱՆ**

Բնութեան հրաշագեղ տեսարաններուն սիրահար մանուկը յանկարծ ինքզինք կը գտնէ գոց շէնքի մը ձեղուններուն տակ, սեւ գրասեղաններու առջև : և կոշտ նստարաններու վրայ, խոժոռ ղէմքի մը և նրացայտ նայուածներու զիմացը : վարժարանն է ուր պիտի պատրաստուի ան, կեանքի կոթիւ մղել կրնալու համար : ուսումներու պէս պիտութեամբ միտք կը զարգանայ և սիրտն ալ բարոյականի բարձր զգացումներով կ'ազնուանայ : հոն պատանին դիտակցութիւնը կ'ստանայ կեանքին իրականութեանը բանաստեղծներու քնարի թելերովը կը թրթռայ հոգին, ու կը տեսնէ որ անոնք, բանաստեղծները, ստուար զգացողութեան միթիթարիչ հոգիները, մարգարէները, սուրբ յիշատակը կը վերաթնցնեն իր մէջ օրօրօքի նուագներուն, եկեղեցիի տաղերուն ու Բնութեան ձայներուն :

Իմաստասէրներէն կ'ուստի ճշմարտութիւնը : գեղարուեստներէն՝ գեղեցիկը, զարդը ճշմարտին : պատանին կը մեծնայ, միտքը կը բացուի, հանճարը՝ եթէ ունի, կը փայլի, և ինքզինքը փոքր առ փոքր կարող կ'զգայ արտայայտելու իր ներքին կիրքերն ու յոյզերը, նկատելու իր գազափարսերը, կը ներշնչուի բարձրագոյն սիրով մը զէպ ՚ի զիտութիւններու, զէպ ՚ի մարդութիւնը :

(Շարունակելի)

**ՀՆՌԱԳԻՐՆԵՐ**

ԼՈՆՏՐԱՒ 19 Յուլիս. — Քիւրթիսի և Շիւրթիսի նահանգներուն մէջ տեղի ունեցած խառնակութիւններուն վրայ հրաման տրուած է որ կիներն ու ազգաները թողուն Եանկ-Ձէյի նահանգները :

պուր աղատելէն և փողօցին մէջ մինակ ձգուելէն ետքը, կաղն ՚ի կաղ հետացած և քիչ մը հեռուն քիւրթի մը տակ ինկած մնացած էր ուժաթափ և ահայի Բիշ յետոյ յոգնած, թրջուած և ցրտացած ջիղերը ընկղմեցին զայն մահատիպ քնոյ մը մէջ, որմէ թերեւս երբէք չպիտի արթննար :

Գառնիկ իր թանկագին գլուտը կուրծքին վրայ սեղմած ընթանալով տուն վերադարձաւ, զուռը բացաւ : մեղմիկ և մատերուն ծայրին վրայ կոխելով ներս մտաւ : Մարիամ կը քնանար հանդարտօրէն :

Ձկնորը կանթեղին մօտեցաւ և զիտեց մանուկը, զոր ճանչնալու զժուարութիւնն ունեցաւ :

Այո՛, ներսէն էր, բայց ինչ վիճակի մէջ, Մեծդ Աստուած :

Ճակտուն մնչու վիղը ցիւխէն զատ ոչինչ կ'երեւէր : Իրեւ զգեստ հագած քուրջիկը շուր կտորած էին, ամբողջ մարմինը ստառած և մանկան վրայ մի միայն տկար և անկանոն շնչառութիւն մը մնացած :

Գառնիկ կ'զգար թէ սիրտը կտոր կտոր կ'ըլլար, աչքերէն արցունք կը ժայթքէր : Սրտին վրայ կը սեղմէր տղեկը, իրր թէ իր ջերմութիւնը անոր փոխանցելու զէր :

Տխրազգեցիկ մտածմամբ համակուած կը գիտէր ներսէսը . . . :

Յանկարծ ցնցուեցաւ՝ միտքը բերելով որ զաւակ մ'ալ ունէր աւելի փոքրատի, զոր պէտք էր գտնել : ո՞վ գիտէ ո՛ւր և ինչ վիճակի մէջ :

Կը յայտարարուի թէ՛ Տէրութիւնները համաձայն են իւրաքանչիւրը 40000 զօրք գրկելու : Չհաստատուի : Հանդիսաւոր հոգեհանգիտ մը պիտի կատարուի Ս. Պողոս Մայր-Եկեղեցին Յուլիս 23 ին, ինչպատակ Բէթիւնի մէջ ջարգուած քրիստոնէիցի :

ԼՈՆՏՐԱՒ 20 Յուլիս. — Ռուսիան յայտարարած է որ, սահմանադրի մօտ, Ամուրի նահանգը պատերազմական վիճակի մէջ գրուած է, հոն մեծամեծ ուժեր դրկելու արամազորութիւններ ձեռք կ'առնէ :

Լիւնուկ-Չանկ, Հոնկ-Քոնկի կառավարիչ Սըր Հ. Պլէքի հետ ունեցած տեսակցութեան մը մէջ, յայտնած է թէ՛ հաւաստի աղբիւրէ գիտէ որ օտար զեապանները մինչև Յուլիս 8 ապահովութեան մէջ էին :

**ՉԻՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ**

ՉԻՆԱՑԻ ՄՈՒՇՄԵՏԱԿԱՆՆԵՐԸ. — Յուլիս 16 ին Կ. Պոլսէն կը գրեն թէ՛ Կիւսում Բ. ի խնդրանաց վրայ, Սուլթանը խոտաւցած է ի գործ գնել ըստ իր ազգեցորդները Չինական Կայսրութեան միւլիմաններուն վրայ : ասոնք Արեւմտեան քաղաքակրթութեան պարձնելու համար :

ԹՈՒՐԻՒՅԻ ԳԻՐԲԸ. — Օտէսայէն Ռուսիայ կը հազարուի թէ՛ Կ. Պոլսոյ Թրքական իշխանութիւնները չ'են թողի որ Տարտանէլէն ու Վասփօրէն անցնին Մայրաքոյն Արեւելք զրկուող Ռուսական գնդերը :

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՄԱՆՉՈՒՐԻԱ. — Ս. Բէթրայուրիէ Ռուսիայի կը հազարուի թէ՛ Կատավարութիւնը 9000 զօրավիճ զօրքեր կը զակէ :

5000 Պաղատներ կը պահեն Մանչուրիոյ երկաթուղին :

Յայտնի է թէ՛ Ռուսիա զինուորականապէս կը պրաւէ Մանչուրիան :

ԳՐԱՒՈՒՄԻ ԲԱՆԱԿ ՄԸ. — Պէրլինի դեւոնագիտական շրջանակներուն մէջ կը հաստատուի թէ՛ Տէրութիւնները համաձայնած են 100000 զօրքէ բազմաքանակ գրաւումի բանակ մը զրկել Չին. Ռուս պորսպարի մը բարձրագոյն նրամասնաարուժեան տակ :

ԿԵՍՏՐՈՒՆԻՆ ԳԻՐԲԸ. — Շանկայէն Յուլիս 10 թուականով, Չինական Պաշտօնական աղբիւրէ մը կը ծանուցուի թէ՛ Կայսրուհին Յուլիս 30 ին ձեռք առած է նորէն Կատավարութեան զեկը, և նախարարապետ կարգած է Եանկ-Լուան Եանքին զրկած է հեռագիր մը, Եանկ-ձէյի փոխարեաններուն շնորհակալութիւն յայտնելով իրենց հաւատարմութեան համար և կը յանձնարարէ որ ամեն զոհողութիւններով պաշտպանեն օտարականները :

Չրոյց կը պտտուի թէ՛ Կայսրուհին Լիւնուկ-Չիւն խնդրած է միջամտել Տէրութեանց թով որպէս զի իր կեանքը խնայուի այն պարագային որ օտար զօրագնդերը Բէթիւն մտնեն :

ՕՏՈՐԱԿԱՆՔԻ ԻՐԻՔԻՆ. — Չինական աղբիւրէ կը հազարուի թէ՛ Բէթիւնի օտարականները փրացած են Բրիտանական զեապանաւոր զէմ զոտուող սպարանքի մը, որ ապստանարանի կը ծառայէ չինացի քրիստոնեաներուն :

Կ'ուզէր ներսէսը հարցուփոճել, քիչ շատ տեղիկութիւն անեղ : բայց անկարելի էր այդ բանը խեղճ պգտիկը աչք ու բերան քանալու անկարող էր :

Հայրը զրատը հանեց, տղեկը հանուցեց զզուշութեամբ, գրատին մէջ փաթեց, և՛ որովհետեւ ուրիշ անկողին չկար սենեկին մէջ՝ մօրը ստնակողմը երկնցուց, վրան ծածկեց և նորէն զուրս պապաւ Սահակը փնտռելու :

Անկարելի է ըսել թէ՛ որ տեսակ մարմնքով կը ճնշուէր այդ մոլորեալ այլ ստրկացած մարդուն սիրտը : Առ այժմ մտատանջութեան ամենամեծ առարկայն Սահակն էր, կարելի հղածին չափ շուտ գտնել այդ մանկիկը : բայց արդեօք այս անգամ ալ զիպուածը պիտի օգնէ՞ր իրեն :

Հիմա՞ ծանր կը քայլէր : մթութեան սովորած աչքերը ստտ անդ յածելով և մէն մի խորշի մէջ իր զաւակը տեսնել կարծելով :

Կ'անիծէր իր արարքը, կ'անիծէր իր գինեմոլութիւնը : բայց, ուսուց, շատ ուշ, իր իսկ այտերուն և սրտին վրայ կ'զգար հակահարուածը այն ապականեւրուն, զոր դեռ այն առաւօտ անխնայ շալկած էր՝ իբր հաց՝ իր որդւոց :

Երբեմն կը փորձուէր զլուրը պատերուն զարնելով ջախջախել, մի և նոյն ժամանակ կը խորհէր որ աստի միջոց մը չ'էր կորսուած մանուկը գտնելու և գերեզմանի մօտ եղող կիներ խնամելու : Առ այժմ ամենէն

ՄՈՒԲՏԸՆԻ ԶԱՐԴԵՐԸ. — Ծանկայէ Յուլիս 12ին «Մթնամար»-ի կը հաղորդուի թէ՛ Մուրթընի մէջ Վիլիսիոն եպիսկոպոսը, Գրէտոնէ, Գորպէլ, Պուրթու եւ Վէճոյ մօ միսիօնարները, նաեւ երկու մայրապետներ սպաննուած են :

Ծանկայի մէջ Պօքարները ջարդած են Սիւրի-Յէնի Գանիօցի Լուստրական տաքելութեան բոլոր Ձինացի քրիստոնէականները, նիւ-Չուանկէ 80000 մղոն հետի :

Թիէն-Ձին. — Ծանկայէ Յուլիս 10 թուականով քաշուած հեռագիր մը կ'ըսէ թէ՛ Յուլիս 6ի ճակատամարտն ամենամանրակշիւն եղած է. Ռուսերն ունեցած են 200 մտեալ - Մէյուր ծովակալը, վէրքը բուժուած, Թիէն-Ձինի անգլիական զորքուն հրամանատարութիւնն առած է : Ձինացիները քաղաքը կը ուժեղանան բերդին հիւսիս-արեւմտեան պատուարէն : Գաշակից զորքը յոգնած են անընդհատ պատերազմներուն պատճառաւ :

30000 Ռուսեր կ'առաջանան դէպ ի Հաւաւային-Մանչուրիա :

«Տէլի էքսպրէս»-ի Ձէֆուի թղթակիցը կ'ըսէ որ 30000 Ռուսեր առջ կը խաղան դէպ ի Մանչուրիոյ հարաւակողմը :

Ձինացիները գրեթէ Ձիճի վրայի բոլոր կամուրջներն այրեցին Սյուիցին նաեւ բազմաթիւ զիւղեր Սարսախը կը տիրէ հարաւային Մանչուրիոյ մէջ :

ՄիտիՍիՍիՍիՍի. — Պէրլինէն կը հաղորդուի թէ՛ իշխան Թուանի ամենազործուն ու ամենավճռական օժտանալին է ՄիտիՍիՍիՍի զորավարը Թուանկ-Յուանկ-Սիանկ, որ 3 ամիս առաջ Թուրքաստանէն 30000 մարդով Բէքին հասած է :

Ստոյգ է որ Ձինացիներն ու Մանչուները բաւական անտարբեր են կրօնային խնդիրներու մէջ ու կը պատկերասրտին Եւրոպացիներուն հետ աւելի ընկերային ու ազգային շարժանքներով. մինչդեռ միապետները մարտանդութենէ մղուած են ու վարդաքին քրիստոնէութեամբ մը սոսորձուած են քրիստոնէից պէ՛մ Եունկ-Լու զօրավարն է որ միջնորդ եղած է իշխան Մուանի եւ Թուանկ-Յուանկ-Սիանկի միջեւ : Վերջերս ճամբորդութիւն մ'ըրած է Թուրքաստան եւ շահած է բարեկամութիւնը զօրավարին : Իշխան Թուան թանկագին զօրավարներ կը կարծէ զո՛ւ կը արեւմտեան Ձինաստանի ՄիտիՍիՍիՍի բնակիչներուն մէջ :

Սակայն երկու կողմէ՛ Ձինացիները չը համախառնեն բովանդակ ՄիտիՍիՍի աշխարհն Եւրոպայի դէմ մղած իրենց պայքարին մէջ :

Պէրլինի մէջ մանաւորապէս վրդովում ցոյց կուտան 4 Պոլսոյ Արքեպիսկոպոս քանի մը օրկաններուն բռնած զիրքէն, որոնք կը խնդակցին Ձինացիներուն յաշտութեանց համար, եւ կը հրաւիրեն զանոնք արշաւել իրենց կազմին Եւրոպա եւ վրեժը յուճել յոլոր այն ստորնագրուներուն զոր Ասիոյ ժողովուրդները կրեցին Եւրոպացիներէն :

**ԴԵՍՊՈՒՆԱՏՈՒՆԷ ԱԶԱՏՈՒՄ**  
**Լի-Հոնիկ-Չուանկի Մէկ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ**

Բարիքի չինական գեսպանը ծանուցած է Մրտաքին Գործոց նախարարութեան թէ՛ Լի-Հոնիկ-Չանկ Յուլիս 10ին իրեն կը ծանուցանէր Գանիթօնէ որ Բէքի-

նէն ընդունած հեռագրի մը համեմատ՝ գեսպանատունները պաշարող զորքերն ու սպասամբները թիչ թիչ ջրուած են :

Պէրլինէն կը ծանուցուի Յուլիս 11ին.

«Ձէֆուի Գերմանական հիւպատոսը կը հեռագրէ թէ՛ Չանկ-Թուանի կատարելու Ձէֆուի օտար հիւպատոսներուն հեռագրած է որ Յուլիս 4ին ստացուած անգլիկութիւններուն համաձայն, Բէքինի գեսպանատունները վտանգէ զերծ են, եւ սպասամբները մարիու վրայ է :

Չանկ-Թուանիի Պապական ու բողոքական միսիոնարները Ձէֆու փոխադրուած են :

Հայոց Բարեգործական Ընկերութեան Տնօրէն Մեծ. Տիար Ս. Պիւլպիւլեան՝ Վարչութենէս խնդրած է հետեւեալ կարևոր բողոքագրի հրատարակութիւնը, առ ի գիտութիւն բոլոր բաժնետէր ընկերաց Բարեգործ. Ընկ. Հայոց :

Չայս հրատարակելով՝ «Նոր Օրոյի Վարչութիւնը կը հրաւիրէ յիշեալ Պատկ. ընկերութեան Ընդհ. Դիւանի Պատ. անդամներուն ու շարժութիւնը, եւ կը փափագի ստանալ այս մասին բաւարար բացատրութիւններ, առանց որոյ պիտի խախտի հանրութեան հաւատքը, զոր ունի 20 տարուան գոյութեամբը պանծացող ընկերութեան մը վրայ :

Պատուարժան Տեսաբ., Անգամբ Ընդհանուր Ժողովոյ Դիւանի Բարեգործ. Ընկերութեան Հայոց Ի Քաղաքի Տեսաբ.,

Կը գիտեմ որ ամենաչնչին խնդիրներու համար խել մը անձնաւորութիւններ վերաբորած էք, իբր թէ կանոնագրի մէն մի յօդուածը կը գործադրէք խստիւ, մինչդեռ հրամանքիդ ստակալի սխալման մը մէջ կը թաւալիք, անագին պատասխանատուութեան մէջ կը գտնուիք. ձեր թերութիւնները բնաւ չը զգայուի :

Ինչ իրաւունք ունիք Տնօրէն Ժողովոյ նեւ գործելու եւ նորա անդամոց պաշտօնները կատարելու, անգամ մը հաճեցէք աչքէ անցընել Ընկ. կանոնագիրը եւ Տնօրէն Ժողովոյ պարտաւորութիւնները եւ կարգացէ՛ք Յօդ. 17 էն մինչեւ 23 :

Ընկերութեան եւ Սրճարանի ամբողջ գործողութիւններն յանձնուած են Տնօրէն Ժողովոյ, Դիւանի եւ քեզ անգամներինդ ու եւ իրաւունք չունիք Տնօրէն Ժողովոյ ամեն իրաւասութիւնները կատարելու, զուք համարառու մարմին մ'էք եւ Տնօրէն Ժողովն համարառու է, զուք ո'չ Ընդհանուր Տնօրէն էք, ո'չ Գանձապետ, ո'չ Հաշուակար, ո'չ Մատակարար, եւ ո'չ Խորհրդակալներ :

Ընկ. կանոնագիրը դժած է ձեր գործունէութեան սահմանը յօդուած 14էն 16 :

Եթէ Դիւանի եւ Տնօրէն Ժողովոյ ամբողջ պարտաւորութիւնները ամենայն ապօրինութեամբ եւ բռնութեամբ զուք միայն պիտի կատարէք, ուրիմն Տնօրէն Ժողովոյ 5 անգամներն պործիք ըրած էք. պէտքը չկայ անոնց :

Անպիտակցաբար կը յառաջանար

Հասած էր ծովափին այն մասը ուր ձկնորսները ցամաք կը քաշեն իրենց նուակները, զիչերային յանկարծանաս փոթորիկներէն վախճալով :

Թէ՛ շատ գէշ կիրպով մարտուած օղիին եւ թէ՛ իրարու յաղորդած ալլալան եղելութեանց ազդեցութեամբ Գանիթի կը յոգնէր, կը տկարանար. սառնաչունչ հոնի ալ զայն կը ջրտացնէր :

Առանց գիտակցութիւն ինչ կ'ընէ, նստաւ նուակներէն միոյն յառաջակողմը, եւ կապուեցած ձեռքերը անութիւններուն սակ գրաւ. նա աչքերը տնկած էր քանի մը քայլ հեռու, ուր մենչկով փշրուող ալիքներէն ծընած Ֆօտֆօրին կը փայլէին իրբեւ անհամար շրջմովիկները : Մերթ աւելի մեծ կոնակ մը որարչաւ կուգար եւ մօտազոյն նուակներուն կողքը ձեռքով՝ աւազին վրայ կը տարածուէր հեւայով :

Գանիթիին նստած մակոյկին քովերէն նորածին շան ձագերու տիրապէին հեծեռուներ կը լսուէին : Ձկնորսը իր արդի մասային արամադրութեան մէջ մեծապէս կ'զգածուէր. կը զթար այդ փոքրիկներուն որոնց մայրը թերեւս հեռացած էր թափթիւրքներու միջոցաւ կաթ հալթայթիւր իր անզօր սլոտիկներուն համար, զոր պիտի տաքցնէր նաեւ իր վերադարձին :

Սանակ ո'ւր էր, նօթի եւ ձման բոլոր սաստիկութեան մասնուած, առանց որ եւ յուսոյ, եւ ինչու... Այդ հեծեռուներուն մերթ կը խառնուէր տարբեր շեշտ մը որուն ուշադրութիւն չ'էր ընէր մտատանջ ձրկնորսը :

Յունիս 15էն ի վեր ընտրած էք զիս Ընդհանուր Տնօրէն եւ սակայն ցարդ ինձ պատկանած պաշտօնները յանձնած չէք, ո'չ ալ թոյլ տուած էք որ Տնօրէն Ժողով գործարկուի Ընկերութեան եւ Սրճարանի գործոց ձեռնարկիմ. ձեր այս բնաւարտութիւնը, զձեզ երեք-նիդ, անգար նսնելի փաստերու երթարկած է Ընկերութեան կանոնագրի հիմնական իրաւանցը հակառակը կը վարուիք, մի միայն զուք էք պատասխանատուն եւ պէտք է տուժէ՛ք :

Գալով ինձ զրկուած ամսոյս 16 թուակիր հրաւիրագրին, ես, ո'չ Վարչական Խորհրդոյ անդամ եմ, ո'չ ալ համարառուի պաշտօն ունիմ. հարկ անհրաժեշտ է որ ձեր անագին սխալը ճանչնաք Տնօրէն Ժողովոյ իրաւասութիւնները որ բնաւարտած էք, եւ 1900 Ապրիլ 1 էն սկսեալ Ընկ. եւ Սրճարանի մէջն գործերը, հակառակ կանոնագրի հիմնական իրաւանց գրաւած էք, պարտիք յանձնել Տնօրէն Ժողովոյ ամենայն ճշգրտութեամբ, որպէս զի Տնօրէն Ժողովն իր պաշտօնին ահլը ըլլալով, նիստեր գումարելով իր գործերը նայի եւ ետամտեայ հաշիւներն պարտաստելով, Դիւանիդ յանձնէ առ ի վաւերացումն :

Ուստի կը փութամ խնարհաբար ի կարգ հրաւիրել զձեզ, այսքան տարիներէ ի յեր գործուած սխալ մը զուք եւս կրկին կ'ուզէք, եթէ պատուարժան Դիւանը կը փափագի կանոնագիրը յարգել, պարտիք ըստ այնմ վարուիլ, «Որ ունեցի ականջն լսելոյ լուսիցէ» :

Սպասելով ձեր կարուկ պատասխանին, այո՛ կամ ո'չ, վերապահելով ինձ, իբր բաժնետէր եւ Ընդհանուր Տնօրէն, իմ ամեն ծրարիներս յարգել տալ ժամանակին ուր որ անկ է, պահանջելով գոհացում իմ պաշտօնավարութեանս առթիւ անձս անպատուած ըլլալուդ համար, եւ ձեր անխոհեմութեան պատճառաւ, առաջ եկած իմ բաժնիներուս փաստներն :

Մ'նամ Պատկ. Դիւանիդ անկեղծ յարգանքօք Տնօրէն Ժողովոյ եւ Սրճարանի Ընդհ. Տնօրէն Ս. Պիւլպիւլեան

Գանիթի 18 Յուլիս 1900

**ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԳՈՐԾ, ԺՈՂՈՎՈՅ**  
**ՄԷԿ ՆԻՍՏԸ**  
**ԶԱԻՆՇՏ ՄԷԿ ԱՐԱՐ**

**ՏԵՍԻՒ ԺԱ.**

ՄԻՐՈՒՀԻ. սուրճի ափսօն ձեռքը եւս մտնելով, կը ներէք էք քէնարներ. . . քիչ մը ուշ մնացի . . . ժողովականներուն մօտեցած. չգիտեմ առաջ օրո՛ւ հրամայեմ... զուք, նարիկեան եփէնտի՛, զուք Ասեանապետ էք, ժողովոյ մեծն էք. . . հրամայէ՛ք . . .

ՏԻՐԱՆ. — Մեր մէջ մեծ պզտիկ չկայ, տիկին, ամենքս ալ ընկեր ենք . . . ժողովուրդի զաւակներ. . . յայն ձեւ ակերպութիւններ չ'ընկելու համար, էն առաջ ես կ'ընդունիմ ձեր պատրաստած սուրճը, շնորհակալութիւնս յայտնելով ձեզ . . .

Յանկարծ՝ իբրեւ հզօր երկկարականութենէ յնցուած՝ տեղէն ցատկեց. մանկական տկար ձայն մը զարկած էր ականջին :

— Մայրի՛կ, արտաբերած էր այդ հծծիւնը

Գանիթի՛ կ'երկնցած թաց գետնին վրայ՝ սկսաւ մակոյկին շուրջը խարխափելու : Պահ մը ետքը ձեռքին տակ կ'զգար թրջուած քորջ մը, որուն վրայ ալ մանկական գլուխ մը՝ երեսը դէպի ի վեր. շօշափումը շարունակելով՝ այդ պիտուն պատկանող կուրծքին եւ փորին վրայ գտաւ նինգ-վեց հատ ձագեր, որոնք կը հեծեծէին անզգաբար :

Այդ մանկան իր Սանակը ըլլալուն անկասկած, ձկնորսը ձագերը վար առաւ մեղմիկ եւ աղեկը սրտին վրայ սեղմած դէպի ի տուն վազեց սրտատանջ :

Դիպուածը իրեն օգնած էր, բայց արդեօք ի՞նչ վիճակի մէջ պիտի գտնէր իր զաւակը :

**Թ.**

Շարափ մը ետքը դարձեալ անցինք, այդ տարաբաղչ բնութանց սենիկին սեմնի :

Կէսօրը անցած է, օրը՝ որ երբէք կատարելապէս պարզուած չ'էր՝ ամպերով ծածկուած է եւ գիշերուան համար յորդ անձրեւ կապառնայ. ցուրտ հով մը տնակը կը զղրդէ եւ ներսը կը թափանցէ ճեղքերէն որոնց շատերուն կտաւէ եւ թղթէ խցաններն ինկած են :

(Շարունակելի)

ստիպողականն էր Սանակը ձեռք ձգել առանց փամովաճառ ըլլալու :

Բայց մինչեւ Եանիթի գիտնալու հասած էր եւ հետք մը չ'էր նշմարած :

Գիտնալուց կէս ժամէ ի վեր գոցուած էր Գաւնիկի դուռը զարկաւ, եւ սպասաւորէն տեղեկութիւնն ուզեց Սանակին բռնած ձմրուն վրայ : Մտառն պատասխանեց թէ՛ նոյն պահուն խիստ զրազեալ ըլլալով բանի մ'ուշադիր եղած չ'էր :

Ձկնորսը հեռացաւ պիտիկոր :

Չ'էր գիտեր թէ՛ ո'ր կողմէն պէտք էր երթալ :

Դիչերապաճի մը հանդիպելով հարցուց թէ՛ երեք շորս տարեկան մանուկ մը տեսած չ'է՞ր :

— Այս օրին չ'է թէ՛ մանուկ այլ մեծերն անգամ կրակին քովէն չ'են հեռանար, պատասխանեց մարդը, եւ եթէ տղեկը մի քիչ ժամանակ ի վեր դուրսը մնացած է, շատ հաւանական է որ սուտած է : Մի միայն գիչերապաճներն են որ՝ իրենց անբաղդութենէն՝ ցուրտին եւ տաքին միշտ փողոցներու մէջ . . .

Գանիթի չ'սպասելով որ մարդը իր արտունջները աւարտէ՛ հեռացաւ արագաքայլ :

Պահապանին չարաչուշակ խօսքերը ականջները կը թնդացնէին : Կը կարծէր մանագոյժ զանգակներուն հնչիւնը լսել, եւ աչքերուն առջեւ անշուք փոքրիկ զագաղ մը տեսնել :

Ըստ իր հաշիւին՝ Սանակ ժամ ու կէսէ աւելի փամանակէ ի վեր կորսուած էր, եւ ցուրտն ալ անգիտադրելի էր . . .

ՍՐՐՈՒՂԻ. — Բան մը չէ . . . շնորհակալութիւն յայտնելու ի՞նչ կայ որ . . . Նարիկեանի սուրբ սուած կը մօտենայ Թարօյեանի :

ՊԵՏՐՈՍ. — ոսփ ելած. ներողութիւն, տիկին . . . հաճեցէ՛ք ափսէն ինծի տալ եւ գացէ՛ք հանդիստ ըրէ՛ք . . . ձեռներն երկնցուցած կուզե՛ս սուրբի ափսէն առնել :

ՍՐՐՈՒՂԻ. — Ո՛չ, Պ. Թաթոյեան, ո՛չ . . .

ՊԵՏՐՈՍ. — Հաւատացէ՛ք որ մենք շատ ուրախ կը լինինք երբ դուք, տիկին, երթաք ձեր հանգստութեան նայիք . . . կ'առնե՛ս ափսէն եւ սեղանին վրայ կը դնե՛ս . . .

ՍՐՐՈՒՂԻ. — Շատ լաւ . . . կ'ընդունիմ . . . դուք ալ դրադած էք արդէն . . . չեմ ուզեր արգելք ըլլալ ձեզի . . . ամենքուդ ալ գիշեր բարի . . .

ԱՄԵՆՔԻՆ. (բաց ի Յովհաննէսէն) Ձեզ լոյս բարի . . . Մբռնի կը մեկնի եւ ժողովակաճի սուրճերնին առնելով կը խմե՛ն :

ՏԻՐԱՆ. ելած եւ խմած սուրճի գաւարը ափսէին մէջ դրած իր սեղը կը դառնայ խօսելով. այժմ մեր գործին գառնանք . . . սոյն նստի օրակարգնիս է 1. Ընթացումն ու վաւերացումն նախորդ բոլոր նստերուն արձանագրութեանց. 2. հայրենաբար կարգադրութիւն. 3. համարաւորութիւն հանրած մեր միամտայ տեղեկագրաւ ու հրամարականաւ . . . միւսներն ալ սուրճերնին խմելով գաւարնին ափսէին մէջ կը դնեն հեճճե՛ս :

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Խելքիս բանը չէ՛. Ատենապետ էֆէնտի . . . Ատ ամենը աս գիշեր չպիտի կրնանք լըմնցնել . . .

ՏԻՐԱՆ. — Զանա՛ք որ այնպէս չլինի . . . Պետրոսին. Ատենապետի էֆէնտի, դուք արձանագրութիւններն լրացուցիք, այնպէս չէ՛ . . .

ՊԵՏՐՈՍ. — Այս նստին արձանագրութիւնը մնաց միայն . . . ժողովոյ աւարտման հետ այն եւս կ'աւարտի . . . դուք ի՞նչ ըրիք սակայն հայրեններն . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Է՛ն խըլիախը . . . ես անանկ կը կարծեմ որ մենք ատ հայրենները զուտ չպիտի հանենք . . . ատ մեր զխօսն փորձանք մ'եղաւ, ազրար . . . ուստի կ'սպասեմ մեկ մեկ գլանիկ ձիւնի :

ՏԻՐԱՆ. — Իրօք փորձանք . . . ցաւալին հոն է որ մեր մէջ տոմարակալ մը չունինք . . .

ՍՐՐՈՒՂԻ. — Ինչո՞ւ համար . . . եղբայրնից շատ լաւ հաշուազէտ մ'է . . .

ՏԻՐԱՆ. — Հաշուազէտ է, բայց տոմարակալ չէ . . .

ՊԵՏՐՈՍ. — Ի՞նչ պիտի ընենք ուրեմն . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Վերջ ի վերջոյ իմ խօսքիս պիտի գաք . . . ընկողմանած կը բնանայ նորեմ :

ՍՐՐՈՒՂԻ. — Կարելի չ'է՛ր նայիլ թէ նախորդ փորձ ժողովոյ ի՞նչ եղանակաւ բռնած է իր հայրեններն ու անոր հետեւելու պէս բան մը ընել . . .

ՏԻՐԱՆ. — Այդ ուղեցիկը ընել . . . չ'յաջողեցանք սակայն, որովհետեւ բան մը չ'հասկցանք . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Մեղք որ բանթալոննից զպրօցի նստարաններուն վրայ մաշեցուցեր էք . . . էկէր ես ալ ձեզի պէս գպրոց գացած ըլլալի՞մ աղիգէի մը մէջ կ'ընէի ատ ամենքը . . . Պ. Պաղտատարեան, մի քննա՛նք . . . քննալու վախի՞թն է հիմա, պէ՛ . . . միւսներ կը խնդան Յովսէփին նայելով, գանձապէտնիս էք . . . էկէ՛ք, սա հայրենները ինչ պիտի ընէք նէ ըրէ՛ք . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Արքնցած . . . Երկար կ'ընէք . . . հազար անգամ ըսի որ տուէք ինծի տետրակներն, գրող-գածիս պէս ընեմ . . . դուք չ'ուզեցիք . . . հիմա ինչ կը հարցնէք ինձ . . .

ՏԻՐԱՆ. — Օ՛ր . . . ձեզ տեսնեմ . . . ի՞նչ պիտի ընէք նէ, էկէ՛ք ըրէ՛ք . . . ազատ արտօնութեան ձեզի . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Սանկ խօսքիս եկէ՛ք, նայիմ . . . կել լի սեղանին մօտ կը նստի. Ո՛ւր են հաշուետոմարներն, տըէք ինծի սա սոյխները . . .

ՊԵՏՐՈՍ. — Ահաւասիկ . . . Յովսէփ կ'առնե՛ս եւ կ'սկսի կարգաւ աչէ անցնել անոնք. Տիրան, Սարգիս, Յովհաննէս եւս կուզան սեղանին ետեւ կը բոլորին ու Յովսէփին ըրածին կը նային :

ՍՐՐՈՒՂԻ. — Յովսէփին. պիտի հաշուուիմ ձեզի հետ, եթէ ձեւի մը վերածէք այս հայրեններու խնդիրը . . . եւ եթէ դուք դեռ զիս չ'յաջողեցաք կարգել, ես ձեզի շուտով հայատանցի ազուր աղջիկ մը պիտի գտնեմ, երեսները Արտամիտու խնձորնե բուն պէս կարմիր . . .

ՏԻՐԱՆ. — Ասկէ աւելի գեղեցիկ բան չ'կրնար ըլլալ, Պ. Պաղտատարեան . . . նշանուած ըլլալուս կը զղջամ . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Սանկ քիչ կը մնայ որ ես ալ կարգուած ըլլալուս վրայ զղջամ . . . Սարգիս, ծօ. չարածի՛ն, էկէ՛ր ատանկ բաներ ունին, ալ ի՞նչ կըսպասես ինչ . . .

ՍՐՐՈՒՂԻ. — Չ'գիտէ՞ք որ մէկ մը ուրիշի մը համար շատ բան կրնայ ընել, բայց իրեն, ո՛չ . . .

ՊԵՏՐՈՍ. — Իրաւ որ ծիծաղելի կը դառնաք . . . ինչ հաճոյք կ'զգաք այս սեռակ խօսքերէ . . . կը գարմանամ . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Շու սամանըն ալթընտան սուեու. երբեք տիւրէնէ պարն, ա. գաւաչաւոր . . .

ՏԻՐԱՆ. — Պ. Թաթոյեանը իրաւունք ունի . . . լուրջ պարտինք ըլլալ . . . գուցէ Պ. Պաղտատարեանը շուարի մեր զուարճարանութիւններէն. Յովսէփ գրիչը կառնե՛ս եւ գրելու կ'սկսի . . .

ՍՐՐՈՒՂԻ. — Խօսքիս տէրն եմ . . . նայեցէ՛ք որ սա մեր նախորդներն ինչպէս գրած են նէ դուք ալ աւելի անոնց պէս գրելու աշխատիք . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Դադրած գրելի. Սա սոյխները, սա սիւնակներն մէջ, սա թուանշանները դնելով ի՞նչ ըսել կուզեն . . .

ՊԵՏՐՈՍ. — Ըսել կ'ուզեն որ այդ հայրեն այս ինչ երեսին վրայ եւս յիշուած է . . .

ՍՐՐՈՒՂԻ. — Չ'եմ կայծեր . . .

ՊԵՏՐՈՍ. — Փորձեցէ՛ք եւ տեսէ՛ք . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Կեցէ՛ք, նայի՛նք . . . հոս 12 գրած են . . . բանանք ուրեմն 12րդ երեսը . . . կը բանայ եւ կը տեսնե՛ս որ նոյն հաւելոյն շարունակութիւնն է. Այս ձիւտ . . . հիմա սա 20րդ երեսը քանանք, որովհետեւ հոս ալ 20 գրած են. կը բանայ եւ նոյն հաւելը կը գտնե՛ս. Թաթոյեանի ըսածը չիտակ է . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Անանկ է նէ մեր մէջ էն շատ բան գիտցող Պ. Թաթոյեանն է եղեր . . .

ՏԻՐԱՆ. — Կարելի չ'է՛ր ուրեմն, Պ. Թաթոյեան. որ հաճէ՛ք օգնել Պ. Պաղտատարեանին . . .

ՊԵՏՐՈՍ. — Ինչ որ ես պիտի ընեմ, Պ. Պաղտատարեանն ալ կրնայ ընել . . . անկէ աւելի բան մը չը գիտեմ հաշուակալութեան մասին . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Հիմա նայեցէ՛ք . . .

ՏԻՐԱՆ. — Կը նայինք . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Աս մեր սոյխայ նախորդները նստած երկար բարակ բաներ գրած են . . . կատարեալ օյր-պաղտութիւն . . . ասեմք կը խնդան. ասանկ բաներ ընելու համար, մենք ալ պէտք էր անոնց պէս վաճառականներ կամ խանութպաններ ըլլայինք . . .

ՏԻՐԱՆ. — Ուրի՛շ . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Ուրի՛շ, հիմա կը հասկնամ որ այդ մարդիկը իրենց միամտայ պաշտօնավարութիւնը ինչո՞ւ այդչափ ամուլ անցուցեր են . . . ատոնց բոլոր գործունէութիւնը ընկերութեան տուամարները մրտակու մէջ կայացեր է միայն . . . իսկ մենք որ արդիւնաւոր ձեռնարկներէ ժամանակ չ'ունեցանք ոչոյն իսկ մեր գործերուն նայելու, ընական է որ . . .

ՏԻՐԱՆ. — Հասկցանք, հասկցանք . . . ըսել կուզէք որ եթէ անոնք ընկերութեան տուամարները լեցուցած են անպէտ գրութիւններով, մենք ալ անոր գանձը լեցուցինք ակնհայտ մտադներով, որոնց հնչիւնը սիրտ կուտայ ընկերութեան, թուեք թոչնու եւ լոյս ոտիւրու. Հայութեան խաւար աշխարհին վրայ . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Ամա՛ն, ամա՛ն . . . ատ ո՛ւր գացիք հասաք, Նարիկեան էֆէնտի . . .

(Շարունակելի)

ԿԵՂՈՄԱԿԱՆ-ԿՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԵԻ  
Հաստատուել 1 յունվար 1897  
Հիմնադիր-Յնօրէն  
Ս. ԲԻՆՐԱՏ

Սոյն հաստատութիւնը փոխադրուած է այժմ Ապտին, և Յուլիս 1է սկսեալ կ'ընդունի միայն գիշերօթիկ աշակերտներ, 13 տարին յրաջուցած և գէթ նախնական կրթութիւնն ստացած :  
Կ'աւանդուի հայերէն, ֆրանսերէն, և անգլիերէն. նաև, առևտրական աշխարհագրութիւն ու տնտեսագիտութիւն, գործնական մէթոտով :  
Ընդունելութեան պայմաններուն և ուրիշ մանրամասնութեանց տեղի կանալու համար դիմել կրթարանի Տեսչութեան, ՆՈՐ ՕՐ ի խմբագրատունը, Պաղար Մուրուրի մէջ, թիւ 38 գրասենակը, ուր Տնօրէնը կը գտնուի, բաց ի կիրակիէ, ամեն օր կէս օրէ ետքը ժամը 3էն մինչև 6 :

Le gérant, J. MUNIER.

ԿՈՒՋԷՔ ՈՒՆԵՆԱԼ ՈՍԿԻ

ԿՈՒՋԷՆ ԼԵՐԻՈՂ, ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ  
ԺԱՄԱՑՈՅՑ ՄԸ  
ՄԻՄԻՍԵՆ 120 ՂՐԾ. ՎՃԱՐԵԼՈՎ  
ԳԻՄԵՑԷՔ

ՍԵԼՎԱՋԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԳՍՀԻՐԷ ՄՈՒՍԳԻ ՓՈՂՈՑ  
Ուր կրնաք գտնել նաև ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենազիւրաւամտալի գներէն սկսելով մինչև աղամանազարդ : Արձաթ ժամացոյցներ 50 զրուչէն սկսեալ : Նիքէլ որմօնիթուտ ժամացոյցներ 22 զրուչէն սկսեալ. նաև Ոսկի, արձաթ եւ ոսկիպատ շքեթաններ եւ զոնարեղէններ, ինչպէս նաև պատի եւ քօնսօլի բազմազան բանախիւններ :  
Ամերիկեան Նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 Ղրուչի անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ընեն :

Ուրեմն գիմեցէ՛ք ուղարկել :  
ՍԵԼՎԱՋԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԱՏԱՆԱՐՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՍՈՍ

Վերջէս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գետիկոնը :  
Կը ըժշկէ բերնի և ակուպի ամեն տեսակ հիւանդութիւնները : Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9 :

ՉՈՒԼԻՉ - ՄԵՔԵՆԱԳՈՐԾ  
ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ ՍԱՐԳԻՍԵԱՆ  
Ս. ԳԱՐԻԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱԸ  
Շարա Մուհամմէտ Ալի, Հապպոնի

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արդրէ զանազան գործիներ սակերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերարեբեալ, ծորակ, ելն, Յանախորդները գոհացունող պայմաններով :

ԱԵԱՆԳԱՏԱՐ (ԷՍԱՆԷԹՃԻ)  
ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

ՇԱՐԷ ՄՕՀԱՄԲԷՏ ԱԼԻ, ՊԱՊ ԷԼ ԽԱԼԳ, ԳԱՀԻՐԷ  
Կ. Պալոյ մուշակաւաճառի խանութին Բով Թիւ 81

Կը յայտարարէ արգոյ հասարակութեան թէ՛ Կ. Պալոյ Պաղէ Գաբու, Թաչխանի թիւ 26 վաճառատունը բնակող և երկար ժամանակէ ի վեր իր փորձառութեամբ և ուղղամտութեամբ բոլոր պատուաւոր յաճախողաց վստահութիւնը գրաւող էմանեթնի Աբրահամ էֆ. Պալթայեանի հետ ընկերակցութիւն մը կազմած է : Այսուհետև Կ. Պալէն Եգիպտոս և Եգիպտոսէն Կ. Պալիս զրկուելիք ամէն տեսակ աւանդներ անկորուտ ու ապահով պիտի յանձնուին սահմանալ տեղերին :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԿ 20 ՅՈՒԼԻՍ 1900

4614	9358	8453	6480	2176	177
186	655	1718	1992	2024	2342
3037	3991	3862	4196	5608	5220
6021	6873	7553	7683	7964	8078
		9728	9732	9936	

Տպագրութիւն Ս. ԳԱՐԻԵԱՆԻ — Պաղար Մուրուր